ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« ----» դեկտեմբերի 2015թ. **N ----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ.270-Ն որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն՝ Ֆեդյա Թեվանյանին սեփականության իրավունքով պատկանող Նալբանդյան փողոցի հ.49/5 հասցեում, տարածագնահատման 2-րդ գոտում գտնվող 164.5 քմ /133.5քմ+31.0քմ/ մակերեսով հողամասից 11.56 քմ հատվածը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.15012015-01-0054 վկայական) փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող հարակից տարածքում և տարածագնահատման 2-րդ գոտում գտնվող 11.56 քմ մակերեսով համարժեք հողամասի հետ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկվող նախագծով նախատեսվում Ֆեդյա Թեվանյանին սեփականության իրավունքով պատկանող Նալբանդյան փողոցի հ.49/5 հասցեում, տարածագնահատման 2-րդ գոտում գտնվող 164.5 քմ /133.5քմ+31.0քմ/ մակերեսով հողամասից 11.56 քմ հատվածը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.15012015-01-0054 վկայական) փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող հարակից տարածքում և տարածագնահատման 2-րդ գոտում գտնվող 11.56 քմ մակերեսով համարժեք հողամասի հետ։

Հարկ է նշել, որ Ֆեդյա Թեվանյանին սեփականության իրավունքով պատկանող Նալբանդյան փողոցի հ.49/5 հասցեում գտնվող զբաղեցրած հողամասի 11.56 քմ հատվածում գտնվում է Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, Նալբանդյան փողոցի հ.49/3 հասցեում գտնվող Կամերային երաժշտության ազգային կենտրոնի շենքը սպասարկող, գործող կաթսայատան ծխատարը, ինչի պարագայում, սեփականատիրոջ հետ բանակցությունների արդյունքում, պայմանավորվածություն է ձեռք բերվել այդ հատվածը փոխանակել կից գտնվող Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող համարժեք 11.56 քմ մակերեսով հողամասի հետ։

Փոխանակման արդյունքում հնարավոր կլինի ապահովել տարածքի առավել կանոնակարգված քաղաքաշինական իրավիճակը և հնարավորություն կստեղծվի հողամասն առավել արդյունավետ օգտագործել։

Փոխանակվող հողամասերը ընդգրկված չեն ՀՀ հողային օրենսգրքի օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում և գտնվում է Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 2-րդ գոտում։

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը փոխանակվում են համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա։

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտություն է առաջացել կայացնելու ավագանու սույն որոշումը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ